



Ֆրանսիայի Ինստիտուտ

«Վիմագիր արձանագրությունների և գեղարվեստական գրականության Ակադեմիան» հիմնադրվել է Կոլբերտի Նախաձեռնությամբ, Լյուդովիկոս XIV-ի օրոք՝ 1663 թվականին: Այն «Ֆրանսիայի Ինստիտուտի» կազմում գործող հինգ պետական Ակադեմիաներից մեկն է: 1805 թվականից ի վեր, գտնվում է «Ինստիտուտի պալատում», Նախկին՝ «Չորս ազգերի վարժարանում», որի հռչակավոր գմբեթը վեր է խոյանում Լուվրի թանգարանի դիմաց:

Սկզբնական շրջանում, որպես «Վիմագիր արձանագրությունների և դրամների Ակադեմիա», այն զբաղվում էր արթունի շենքերի, մետաղադրամների և մեդալների վրա փորագրվելիք՝ լատիներեն կամ ֆրանսերեն արձանագրությունների պատրաստմամբ: Սակայն, 1701 թվականի բարեփոխության արդյունքում, ստացավ իր այժմյան անվանումն ու առաքելությունը՝ զարգացնել և տարածել գիտելիքներ անտիկ դասական շրջանի հնությունների, միջին դարերի և արդի ժամանակաշրջանի սկզբի, ինչպես նաև Մերձավոր և Դեռավոր Արևելքի քաղաքակրթությունների վերաբերյալ: Վերջերս, նրա հետաքրքրության կենտրոնում են նաև աշխարհի մյուս մայրցամաքների մշակույթները, այդ թվում՝ Ամերիկայի էթնիկ և հին մշակույթները: Ակադեմիայում կատարվող հետազոտություններն ընդգրկում են պատմության, հնագիտության, արվեստի պատմության, բանասիրության, լեզվաբանության, գրականության, գաղափարների պատմության, ինչպես նաև մասնագիտացված գիտությունների (վիմագրագիտություն, դրամագիտություն, դիվանաբանություն և այլն) ոլորտները:

Գիտահետազոտական հնագույն ավանդույթներ ունեցող Ակադեմիան (որի 1665 թվականին հիմնադրված, ամենահին գիտական պարբերականը՝ «Journal des savants»-ը, ցայսօր հրատարակվում է), շարունակում է աշխույժ գիտական գործունեությունը: Ուստի և Ակադեմիայում կատարված հետազոտությունների հրապարակումները միջազգային մեծ համբավ և հեղինակություն են վայելում:

Ակադեմիան, իր սահմանադրության համաձայն, նպաստում է գիտական հետազոտությունների զարգացմանը, քաջալերելով այն մրցանակաբաշխությամբ: Դրա հետ մեկտեղ, գիտական նիստերի ժամանակ ներկայացված զեկուցումները ծառայում են գիտության և խորագիտության (érudition) ասպարեզում նկատվող նոր միտումների ու հայտնագործությունների ազգային և միջազգային լայն տարածմանը: Ակադեմիան աչքի է ընկնում նաև իր կատարած հրատարակչական անխոնջ աշխատանքով, որի շնորհիվ, հանդիսանում է Ֆրանսիայի գիտական հրապարակումների խոշոր կենտրոններից մեկը: Որպես ազգային գիտության գերագույն մարմին, այն կատարում է խորհրդատուի և փորձագետի դերը պետական իշխանությունների մոտ, իր առաքելության ոլորտների շրջանակում: Վերջապես, Ակադեմիան մասնակցում է արտասահմանում գործող



Ֆրասիական գիտահետազոտական հիմնարկությունների հսկողությանը, և հայտնում է իր կարծիքը կադրերի ընտրության հարցում:

Այսպիսով, « Վիմագիր արձանագրությունների և գեղարվեստական գրականության ակադեմիան » իրավացիորեն կարելի է համարել այն վայրը, ուր « փրկվում » և պահպանվում է մարդկության հիշողությունը, ինչպես նաև այն « լաբորատորիան », ուր մշակվում է մարդու, նրա հասարակությունների և նրա մշակույթների մասին գիտությունը:

Հանգուցային բառեր (Metadata)՝ Ակադեմիա, Պատմություն, Հնագիտություն, Հումանիտար գիտություններ, Բանասիրություն, Արևելագիտություն, Անտիկ շրջան, Միջին դարեր, Խորագիտություն (érudition), Գիտական հրատարակություն, Մեկենասություն:

